ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Առաջին ալիքի հեռուստահաղորդավարների կերպարների դուրսբերումը երիտասարդների շրջանում

Երևան 2017

Բովանդակություն

Հետազոտության մեթոդաբանության նկարագրություն 3
Տվյալների վերլուծություն 4
Ամփոփում 13

Հետազոտության մեթոդաբանության նկարագրություն

«Առաջին ալիքի հեռուստահաղորդավարների կերպարի դուրսբերումը երիտասարդների շրջանում» հետազոտությունը նպատակ ունի դուրս բերել երիտասարդների ընկալումներն Առաջին ալիքի հեռուստահաղորդավարների վերաբերյալ: Հետազոտության առջև դրված են հետևյալ հարցադրումները՝

- դուրս բերել երիտասարդների կողմից սիրված/չսիրված հեռուստահաղորդավարներին,
- դուրս բերել հեռուստահաղորավարներին սիրել/չսիրելու պատճառները,
- դուրս բերել երիտասարդների կողից Առաջին ալիքի սիրված/չսիրված հեռուստահաղորդավարներին,
- դուրս բերել իդեալական հեռուստահաղորդավարի կերպարը:

Հետազոտության նպատակից և առկա հարցադրումներից ելնելով՝ ընտրվել է ֆոկուս խմբային քննարկումների մեթոդը: Վերջինս թույլ է տալիս ոչ միայն մի շարք հարցերի շուրջ իրականացնել քննարկումներ մասնակիցների հետ, այլև մասնակիցների միջև ծավալված քննարկումներից դուրս բերել առկա հարցադրումների պատասխանները: Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները 18-35 տարեկան երիտասարդներ են, ովքեր ընտրվել են ձնակույտի և սոցիալական ցանցերի միջոցով՝ պահպանելով սեռի և տարիքի չափանիշը

Տվյալների վերլուծություն

Իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը ներկայացված է ստորև նշված կառուցվածքով՝

- ✓ սիրված և չսիրված հաղորդավարների դուրսբերում,
- ✓ հաղորդավարների իդեալական կերպարի դուրսբերում:

Այս կառուցվածքն ունի հետևյալ տրամաբանությունը. քննարկումների միջոցով դուրս են բերվում երիտասարդների կողմից սիրված հաղորդավարները, այդ հաղորդավարներին նախընտրելու պատճառները, այնուհետև քննարկվում են երիտասարդների չսիրած հաղորդավարները, տրվում են մեկնաբանություններ, որից հետո ամփոփելով երիտասարդները ներկայացնում են այն հիմնական չափանիշները, որոնք հարկավոր են իդեալական հաղորդավարի համար:

Սիրված և չսիրված հաղորդավարների դուրսբերում: Հետազոտության նպատակից ելնելով՝ կարևոր է դուրս բերել երիտասարդների կողմից սիրված հաղորդավարներին և հասկանալ դրանց կերպարներն ու երիտասարդների ընկալումներն այդ կերպարների վերաբերյալ: Քննարկման արդյունքները ցույց են տալիս, որ երիտասարդների կողմից իբրև միանշանակ սիրված հաղորդավար կարող ենք առանձնացնել Գարիկ Պապոյանին, ում մասին իբրև սիրված հաղորդավար խոսում են մասնակիցների մեծամասնությունը: Վերջինս երիտասարդներին գրավում է իր անմիջականությամբ, հումորով և այդ ամենի հետ միաժամանակ՝ գրագիտությամբ:

«Ինքը հա՛մ անմիջական է, հա՛մ կոկիկ, հա՛մ գրագետ: Հումորի սահմանները շատ լավ գիտի: Ինչ անում է շատ գեղեցիկ է լինում: Արհեստականություն չկա»:

(իգական սեռ, աշխատող)

Գարիկ Պապոյանն ընկալվում է իբրև ճկուն, ազատ ոճի, սակայն միևնույն ժամանակ էթիկայի սահմանները գիտակցող հաղորդավար, ով կարողանում է

գրավել հանդիսատեսի ուշադրությունը: Գարիկ Պապոյանը, սակայն, հիմնականում ասոցացվում է Շանթ հեռուստաընկերության հետ. Առաջին ալիքի հետ ասոցացում դեռևս չկա երիտասարդների մոտ: Առաջին ալիքի սիրելի հաղորդավարների մասին խոսելիս երիտասարդներն առանձնացնում են Խորեն Լևոնյանին, Արևիկ Ուդումյանին, Գոհար Գասպարյանին, Ավետ Բարսեղյանին: Քննարկումների ընթացքում ամենաշատ անդրադարձը կատարվել է Ավետ Բարսեղյանին, սակայն հնչած կարծիքները կարելի է բաժանել երկու խմբի: Բոլոր երիտասարդները նշում են, որ Ավետ Բարսեղյանը գրագետ ու կիրթ հաղորդավար է, սակայն մի մասի համար Ավետ Բարսեղյանի «չափից ավելի գրագիտությունը» նրան դարձնում է ոչ գրավիչ. գրագիտության չափազանց ընդգծումն ընկալվում է իբրև գոռոզության դրսևորում և դրանով հեռվացնում է հաղորդավարին հանդիսատեսից: Երիտասարդներից մեկը նշում է.

«Ավետ Բարսեղյանը մի քիչ շատ պաթետիկ է, ինքնագովազդով է զբաղվում: Եթե դու եթեր ես դուրս եկել, պետք է քեզ մի քիչ զսպված պահես, թե չէ բառապաշարը նորմալ է, ինքնահավան է ուղղակի պահում, որը վանում է»:

(իգական սեռ, ուսանող)

Այս կարծիքը կիսող երիտասարդները, թերևս ընդունում են Ավետ Բարսեղյանի գրագետ հաղորդավար լինելու փաստը, այնուամենայնիվ չեն համակրում նրան: Երիտասարդների մյուս խումբը գտնում է, որ այս հաղորդավարին ոչ միայն հաճելի է լսել, այլև նրանից հնարավոր է սովորել գրագետ խոսել: Երիտասարդներից ոմանց համար էլ Ավետ Բարսեղյանի կերպարը տարբերվում է՝ կախված հեռուստաալիքից: Այսպես, մասնակիցները նշում են, որ «Շանթի և Առաջին ալիքի Ավետ Բարսեղյանները միմյանցից տարբերվում են». Շանթ հեռուստաընկերությունում նա ընկալվում է առավել ազատ և վարքագծի սահմանները հաճախ հատող, մինչդեռ Առաջին ալիքում նա առավել կիրթ ու գրագետ է:

Խորեն Աբրահամյանը երիտասարդների կողմից միանշանակ դրական է ընկալվում և համարվում համակրելի հաղորդավար: Նա նույնպես որակվում է իբրև գրագետ հաղորդավար, սակայն ի տարբերություն Ավետ Բարսեղյանի, այստեղ կարծիքները համընկնում են, և գրագիտության հետ զուգահեռ երիտասարդները նշում են, որ նրան հաճելի է լսել: Իբրև սիրելի հաղորդավարներ առանձնացվել են նաև Արևիկ Ուդումյանը, Աննա Ավանեսյանը ում ոչ միայն հաճելի է լսել, այլև հաճելի է դիտել: Ընդհանուր առմամբ, Առաջին ալիքի հաղորդավարները երիտասարդների կողմից ընկալվում են իբրև գրագետ, կրթված և իրենց աշխատանքը լավ իմացող ու կատարող մասնագետներ: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ «սիրելի հաղորդավար»-ի մասին խոսելիս մասնակիցները հիմնականում նշում էին Շանթ ու Արմենիա հեռուստաալիքների հաղորդավարներին, իսկ Առաջին ալիքի հաղորդավարների մասին խոսում էին հստակ «Առաջին ալիքի նախընտրելի հաղորդավարներ»-ին անդրադառնալիս: Ըստ էության, սա նշանակում է, որ բոլոր հաղորդավարների մեջ Առաջին ալիքի հաղորդավարները, թերևս համարվում են գրագետ ու կիրթ, սակայն չեն գրավում երիտասարդների ուշադրությունն այնքանով, որ լինեն սիրելի հաղորդավար: Երիտասարդներն իրենց նախապատվությունը տալիս են հիմնականում Շանթի հաղորդավարներին, քանի որ վերջիններս ավելի անմիջական են և ավելի «մոտ են կանգնած հեռուստադիտողին»: Մասնակիցները նշում են, որ Շանթի հաղորդավարները, չնայած նրան, որ Առաջին ալիքի հաղորդավարների նման գրագետ, կոկիկ ու դասական չեն, սակայն նրանց ավելի հաճելի է լսել ու դիտել իրենց անմիջականության, հումորի ու ճկունության շնորհիվ: Մասնակիցներից մեկը նշում է.

«Շանթի լրագրողները ժողովրդական են, իրենք սիրվում են. կառանձնացնեմ Արամ Աբրահամյանին, որը վարում է լուրերը, բայց ինքը Հ1-ի հաղորդավարի պես կոկիկ ու գրագետ չի ներկայացնում, ինքը ժողովրդական է վարում: Նույնը կարելի է ասել Անահիտի մասին, Գլումովը, Սերգեյ Դանիելյանը, ինքը գրագետ չի վարում, բայց իր արածն ընդունվում է»:

(արական սեռ, աշխատող)

Արմենիա հեռուստաալիքի սիրելի հաղորդավարների շարքում հիմնականում առանձնացվում է Նազենի Հովհաննիսյանը; Վերջինս, սակայն, ինչպես և Ավետ Բարսեղյանը, միանշանակ չի ընկալվում երիտասարդների կողմից. երիտասարդների կարծիքներն այստեղ նույնպես կիսվում են երկու մասի: Երիտասարդների մի մասը գտնում է, որ Նազենի Հովհաննիսյանն իր մեջ ներառում է գեղեցիկի ու գրագետի համադրությունը, իսկ մյուս մասը համարում է, որ Նազենի Հովհաննիսյանը գոռոզ է և ոչ պրոֆեսիոնալ: Որպես սիրված հաղորդավար նշվում է նաև Գրիշա Աղախանյանը, ով համարվում է հետաքրքիր և գրավիչ ձայն ու կեցվածք ունեցող հաղորդավար:

Առաջին ալիքի չսիրված հաղորդավարների մասին խոսելիս՝ երիտասարդների մի մասը դժվարանում է առանձնացնել հստակ հաղորդավարի՝ նշելով, որ Առաջին ալիքի հաղորդավարները որևէ կերպարով չեն տպավորվել: Ըստ էության, կարող ենք ասել, որ երիտասարդների մոտ Առաջին ալիքի հաղորդավարները տպավորված չեն ո՛չ դրական, ո՛չ բացասական կերպով: Մասնակիցը նշում է.

«Կամ իրենք շատ հիշվող չեն, դա է թերությունը: Ես, օրինակ, լուրերինը չեմ հիշում, բայց որ ասեմ լավը չեն, էդպես չէ, բայց իրանց թերությունը էն ա, որ ֆիշկա չունեն, հիշվող չեն:»

(իգական սեռ, ուսանող)

Ըստ էության, ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում դուրս բերված այս կարծիքն Առաջին ալիքի հաղորդավարների վերաբերյալ առկա է ոչ միայն երիտասարդների, այլև հասարակության մոտ, ինչի մասին վկայում են 2017 թ. մայիս-հունիս ամիսներին իրականացված քանակական հետազոտության արդյունքները *(Գծապատկեր 1)*: Այն հարցին, թե Առաջին ալիքի որ հաղորդավարին են ճանաչում հասարակության 23.9%-ը դժվարացել է պատասխանել, իսկ 23.8%-ը նշել է «ոչ մեկին» պատասխանը: Ըստ էության, այս

տվյալները խոսում են այն մասին, եր հասարակության 47.7%-ը չի կարողացել հիշել Առաջին ալիքի որևէ հաղորդավարի: *Գծապատկեր 2-ում* կարող ենք տեսնել, որ Առաջին ալիքի ոչ մի հաղորդավար չճանաչողների շարքում ամենամեծ տոկոսը կազմում են երիտասարդները. 14-24 տարիքային խումբը՝ 31.9%, 25-34 տարիքային խումբը՝ 24%:

Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.



Այնուամենայնիվ, երիտասարդների մի մասն առանձնացնում է Առաջին ալիքով իրենց կողմից չսիրված հաղորդավարներ: Վերջիններիս շարքում են Ավետ Բարսեղյանը, Գևորգ Ալթունյանը, Հերմինե Ստեփանյանը: Ինչպես արդեն նշվել է, Ավետ Բարսեղյանի մասին խոսելիս երիտասարդները բաժանվում էին երկու խմբի. երիտասարդներ, ովքեր համակրում են և մասնակիցներ, ովքեր չեն համակրում հաղորդավարին: Մասնակիցների մի մասն Ավետ Բարսեղյանին՝ իբրև չսիրված հաղորդավար, անդրադարձել է երկու ճանապարհով. առաջինը որպես անհամաձայնություն այն մարդկանց հետ, ովքեր գտնում են, որ Ավետ Բարսեղյանը լավ հաղորդավար է և երկրորդ դեպքում՝ հիշատակելով իբրև չսիրված հաղորդավար: Գևորգ Ալթունյանին և Հերմինե Ստեփանյանին երիտասարդները նշել են միայն չսիրված հաղորդավարներին քննարկելիս, ընդ որում, երիտասարդները հստակ չէին հիշում Հերմինե Ստեփանյանի անունն, այլ փորձում էին նկարագրելով բացատրել ում նկատի ունեն: Այսպես, երիտասարդներից մեկը նկարագրում է.

«Չգիտեմ հիմա կա թե չէ, ինքը վարում էր «Առավոտ լուսո»-ն, ինքը ինձ թվում էր առավոտ շուտ թարթիչները դրած, մեծ սանրվածքով ու ինքը չգիտեմ ինչ էր խոսում՝ կմկմալով, առանց գրավելու:»

(իգական սեռ, աշխատող)

Գևորգ Ալթունյանի մասին խոսելիս՝ երիտասարդները նշում են նրա խոսելաձևը, որը ձանձրացնում է հեռուստադիտողին:

Ընդհանուր չսիրված հաղորդավարների շարքում երիտասարդներն առանձնացնում են Լիլի Հովերին, Վահե Ղազարյանին, Արմեն Թադևոսյանին, Գագիկ Շամշյանին, Վահե Տեր-Մինասյանին: Այս հաղորդավարների մասին քննարկումների ընթացքում մասնակիցների կողմից առարկություն չկար, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ վերոհիշյալ հաղորդավարների վերաբերյալ երիտասարդները միակարծիք են: Լիլի Հովերի մասին խոսելիս՝ երիտասարդները

շեշտադրում են արտաքին տեսքը, հագուստն ու կեցվածքը, որը այս հաղորդավարուհու պարագայում շատ արտահայտիչ է: Մասնակիցը նշում է.

«Օրինակ Լիլի Հովերը, իրան ոչ թե ընտրել են, որ մարդիկ լսեն տեսությունը, այլ իրա հագուստը, դեմքը, այնքան ճչացող է, այնքան վուլգար է, որ սխալ է»:

(իգական սեռ, ուսանող)

Այս և մյուս դիտարկումներից կարող ենք ասել, որ երիտասարդների համար հաղորդավարի արտաքինը կարևոր է վերջինիս կողմից հաղորդված տեղեկատվության ընկալման համար:

Վահե Ղազարյանն ու Գագիկ Շամշյանը տագնապ են առաջացնում երիտասարդների մոտ իրենց տոնայնությամբ և հաղորդած տեղեկատվությամբ: Ավելին, Գագիկ Շամշյանի խոսելաձևը համարվում է գռեհիկ և ոչ եթերային: Ծավալված քննարկումները թույլ են տալիս ենթադրել, որ այս հաղորդավարների նկատմամբ բացասական դիրքորոշումը պայմանավորված է այն հաղորդումներով, որոնք նրանք վարում են, քանի որ հաղորդումները ևս շեշտադրվում են երիտասարդների կողմից:

Հաղորդավարների իդեալական կերպարի դուրսբերում: Իրականացված քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ երիտասարդները հաղորդավարների մեջ կարևորում են հետևյալ հատկությունները՝

- ✓ խոսք,
- ✓ հաղորդելու ոճ, հեռուստադիտողի հետ «հաղորդակցվելու» ձև,
- ✓ արտաքին տեսք,
- ✓ մասնագիտական հմտություններ:

Երիտասարդները բոլոր քննարկումների ընթացքում անդրադարձել են այս կետերին. նույնիսկ խոսելով իրենց կողմից համակրելի/ոչ համակրելի հաղորդավարների մասին՝ երիտասարդներն իրենց մեկնաբանությունները կառուցում էին այս չորս չափանիշների շուրջ:

Մասնակիցները նախ և առաջ կարևորում են գրագետ խոսքը՝ իբրև իդեալական հաղորդավարի հիմնական չափանիշ: Հաղորդավարի խոսքը պետք է լինի գրագետ, քանի որ հեռուստացույցը նաև կրթող գործառույթ է իրականացնում. հեռուստադիտողը, մասնավորապես պատանիներն ու երեխաները շատ հաճախ սովորում են հեռուստատեսությամբ ցուցադրվող հաղորդումներից, ինչն էլ պարտավորեցնում է հաղորդավարներին ունենալ գրագետ կառուցված խոսք: Մասնակիցը նշում է.

«Հիմա կարծում եմ հաղորդավարների միջոցով ենք տեղ հասցնում, դրա համար պետք է լինի գրագետ, որ հեռուստադիտողը սովորի ճիշտ խոսել»:

(իգական սեռ, ուսանողուհի)

Այս համատեքստում հատկապես կարևորվում է Առաջին ալիքի հաղորդավարների խոսքը, քանզի այն հանրային հեռուստաընկերություն է և ավելի քան մյուսները պետք է կատարի կրթող գործառույթ:

Գրագետ խոսքի հետ զուգահեռ երիտասարդները կարևորում են հաղորդավարի տեղեկատվությունը փոխանցելու և հաղորդումը վարելու ձևը: Չնայած երիտասարդները նշում են գրագետ ու դասական ձևը, այնուամենայնիվ հաղորդումն առավել գրավիչ դարձնելու համար կարևոր է հաղորդումը վարելու ձևը, որն, ըստ երիտասարդների պետք է լինի գրագետ, բայց միևնույն ժամանակ՝ անմիջական: Իդեալական հաղորդավարը պետք է լինի անկեղծ հեռուստադիտողի հետ «շփման ընթացքում», լինի ճկուն, ունենա հումորով մոտեցում: Այս հատկանիշները մասնակիցները անդրադարձել են իդեալական հաղորդավարի կերպարի մասին խոսելիս, ինչպես նաև իրենց կողմից սիրված/չսիրված հաղորդավարներին բնութագրելիս. սիրված հաղորդավարները համարվում էին անմիջական, հումորով, իսկ չսիրվածները՝ կեղծ:

Հեռուստահաղորդավարի իդեալական կերպարի առանձնացված մյուս չափանիշը հագուստն ու արտաքին տեսքն է: Երիտասարդների կարծիքով հաղորդավարի արտաքին տեսքը պետք է համապատասխան լինի այն

հաղորդման ոճին, որը նա վարում է: Կարևոր է այն հանգամանքը, որ հաղորդավարի արտաքին տեսքն ու մասնավորապես հագուստը չլինեն այնքան արտահայտիչ, որ շեղեն հեռուստադիտողի ուշադրությունը հաղորդվող նյութի բովանդակությունից:

Մասնագիտական հմտությունների վերաբերյալ քննարկման ընթացքում երիտասարդների կարծիքները կարելի է բաժանել երկու խմբի: Մի խմբի երիտասարդները գտնում են, որ հաղորդավար պետք է լինի այն մարդը, ով ստացել է համապատասխան կրթություն: Երկրորդ խմբի երիտասարդների կարծիքով լավ հաղորդավար լինելու համար պարտադիր չէ ունենալ հաղորդավարի կրթություն, այլ ավելի կարևոր է տիրապետել համապատասխան հմտությունների, որոնց շարքում են ճկունությունը, հեռուստադիտողի ուշադրությունը գրավելու ունակությունը, կեցվածքը և գրագիտությունը: Քննարկումների ընթացքում այս երիտասարդների կողմից բերվում են օրինակ, երբ հաղորդավարի մասնագիտություն չունեցող հաղորդավարն այսօր առավել սիրելի է հեռուստադիտողի կողմից, քան այն հաղորդավարն, ով ունի համապատասխան մասնագիտացում: Պետք է նշել, որ քննարկումների ընթացքում այս կարծիքը կիսող երիտասարդները մեծամասնություն էին կազմում:

Ամփոփում

«Առաջին ալիքի հաղորդավարների կերպարի դուրսբերումը երիտասարդների շրջանում» հետազոտության տվյալների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

- ✓ Երիտասարդներն Առաջին ալիքի հաղորդավարներին համարում կիրթ, գրագետ խոսք ու դասական կեցվածք ունեցող մասնագետներ, ովքեր տարբերվում են մյուս հեռուստաալիքների հաղորդավարներից: Այս դրական գնահատականով հանդերձ երիտասարդների կողմից հիմնական սիրված հաղորդավարները Շանթ և Արմենիա հեռուստաալիքներից են: Առաջին ալիքի հաղորդավարների վերաբերյալ քննարկումների ընթացքում երիտասարդները հիմնականում խոսում են ընդհանրական կերպարի մասին, ով կիրթ է ու գրագետ, մինչդեռ այլ հեռուստաալիքների հաղորդավարների մասին խոսելիս անհատապես նշում են անուններ:
- ✓ Երիտասարդների կողմից սիրված հաղորդավարների հիմնական շարքում են Գարիկ Պապոյանը, Նազենի Հովհաննիսյանը, Ավետ Բարսեղյանը ովքեր նշվում են սիրելի հաղորդավարների մասին քննարկումների ընթացքում: Պետք է նշել, որ եթե Գարիկ Պապոյանը միանշանակ դրական է ընկալվում երիտասարդների կողմից, ապա Ավետ Բարսեղյանի ու Նազենի Հովհաննիսյանի վերաբերյալ ընկալումների մի մասը դրական է, մյուս մասը՝ բացասական: Սիրելի/ոչ սիրելի հաղորդավարների մասին քննարկումների ընթացքում Առաջին ալիքի հաղորդավարները հիմնականում չեն նշվում երիտասարդների կողմից: Նրանց մասին քննարկում ծավալվում է այն ժամանակ, երբ հարցն ավելի մասնավորեցվում է և քննարկումն ընդհանուր հաղորդավարներից տեղափոխվում է Առաջին ալիքի հաղորդավարների հարթակ: Հաշվի առնելով այս

հետազոտության ընթացքում իրականացված քննարկումների և 2017թ. մայիս-հունիս ամիսներին իրականացված հետազոտության քանակական տվյալները՝ կարող ենք ասել, որ Առաջին ալիքի հաղորդավարների կերպարները տպավորիչ չեն երիտասարդների համար: Նրանք ընկալվում են ընդհանրական կերպարով՝ կիրթ, գրագետ, սակայն իբրև առանձին անհատականություններ տպավորված չեն:

- ✓ Առաջին ալիքի հաղորդավարները, թերևս համարվում են գրագետ ու կիրթ, սակայն հեռուստադիտողի համար «օտար» են: Երիտասարդների կողմից կարևորվում է հաղորդավարի անմիջականությունը, հեռուստադիտողին առավել «հասանելի լեզվով» խոսելու և գրավելու ունակությունը:
- ✓ Իդեալական հաղորդավարի կերպարի մասին խոսելիս երիտասարդներն առանձնացրել են մի շարք չափանիշներ, որոնք կարելի է միավորել չորս կատեգորիաների մեջ՝
    1. խոսք,
    2. հաղորդելու ոճ, հեռուստադիտողի հետ «հաղորդակցվելու» ձև,
    3. արտաքին տեսք,
    4. մասնագիտական հմտություններ:

Երիտասարդների կողմից կարևորվում է հաղորդավարների գրագետ խոսքը, որը կարող է կրթող գործառույթ ունենալ հեռուստադիտողի համար: Միևնույն ժամանակ հաղորդավարների չոր և դասական խոսքը չի գրավում երիտասարդներին. նրանց կողմից կարևորվում է հաղորդավարների «հաղորդակցման» ոճը, որը պետք է լինի անմիջական, հետաքրքրող: Մասնակիցները անդրադառնում են նաև հեռուստահաղորդավարների արտաքին տեսքին, որը պետք է լինի կոկիկ և չշեղի հեռուստադիտողի ուշադրությունը հաղորդվող նյութի բովանդակությունից: Մասնագիտական հմտությունների վերաբերյալ առկա է երկու տեսակետ. երիտասարդների մի մասը կարծում է, որ

հաղորդավարները պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթություն, մինչդեռ երիտասարդների մյուս մասի կարծիքով մասնագիտական կրթությունը էական նշանակություն չունի եթե հաղորդավարը կարողանում է հետաքրքրել հեռուստադիտողին և փոխանցել համապատասխան տեղեկատվությունը: